ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 120-Լ

«20» 12 2022 թ.Ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 21-րդ կետը, 5-րդ հոդվածի 5-րդ մասը, Հայաստանի Հանրապետության դատախազության ներքին աուդիտի կոմիտեի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու և առանձին գործառույթների իրականացման համաչափ վերաբաշխում կատարելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության դատախազության ներքին աուդիտի կոմիտեի հետևյալ կազմը.

Աննա Վարդապետյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ (կոմիտեի նախագահ),

Անահիտ Մանասյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ (կոմիտեի անդամ),

Համայակ Նավասարդյան – Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղար (կոմիտեի անդամ),

Տաթևիկ Սարուխանյան - Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալ (կոմիտեի անդամ),

Միեր Ափրիկյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդական (կոմիտեի անդամ),

Հայկ Մարտիրոսյան - Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ (կոմիտեի անդամ),

Աղավնի Բաբայան - «Փըրֆեքթ Աուդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն (կոմիտեի քարտուղար):

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի N 117 հրամանը՝ հետագա բոլոր փոփոխություններով:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ